ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱՁՈՐԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԾՐԱԳԻՐ

Մասնագիտություն/ ուղղություն ___Պատմություն_____

Որակավորումը _____մանկավարժության բակալավր_____

Ֆակուլտետ _Հումանիտար գիտությունների_____

Ուսուցման ձև_____առկա, հեռակա_____

Հաստատված է ամբիոնի նիստում

(արձանագրություն N 6, 25. 01. 2022թ.)

Հեղինակ՝ Ս.Շ.Աղաջանյան

Ամբիոնի վարիչ՝ Ֆ.Վ.Մովսիսյան

Հաստատված է Հումանիտար

գիտությունների ֆակուլտետի խորհրդի

նիստում 26.01.2022, արձ. թիվ 7

դեկան՝ Մ. Ա. Բրուտյան

ՎԱՆԱՁՈՐ 2022թ.

1. ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՆՊԱՏԱԿԸ

«Պատմություն» մասնագիտության արտադրական/մանկավարժական պրակտիկայի նպատակն այնպիսի կարողությունների, հմտությունների զարգացումն է, որոնք անհրաժեշտ են ուսանողի ապագա մասնագիտական կայացմանը: Պրակտիկան ուսանողների մեծամասնության համար հանդիսանում է ուսումնառության ընթացքում ձեռք բերած դասավանդման վերաբերյալ տեսական գիտելիքները գործնականում կիրառելու առաջին փորձը: Պրակտիկայի նպատակը մասնագիտական աշխատանքում անհրաժեշտ կարողությունների, հմտությունների զարգացումն է, մասնագիտական կոմպետենցիաների ձևավորումը, որոնց հիմքը հանդիսանում են ուսումնառության ընթացքում հայոց պատմության և համաշխարհային պատմության ուսումնասիրումը:

2. ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Ուսանողները ծանոթանում են ուսումնական հաստատության գործունեության տարաբնույթ կողմերին:
2. Սովորում են տարբեր մեթոդների կիրառմամբ և պարապմունքների զանազան ձևերի օգտագործմամբ դասեր նախապատրաստել և անցկացնել:
3. Տիրապետում են մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմանը, որոնք ներկայումս ներդրվում են մեր դպրոցում,
4. Գործնականում տիրապետում են դասավանդման ժամանակ կիրառվող բանավեճերի ձևերին և դրանց անցկացման կանոններին:
5. Ձեռք են բերում մանկավարժական փորձառություն:
6. Զարգանում են նրանց հմտություններն ու կարողությունները:
7. Պրակտիկան նպաստում է ուսանողի մասնագիտական կողմնորոշվածության վերջնական ձևավորմանը:

3. ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆԸ, ՎԱՅՐԸ

«Պատմություն» մասնագիտության արտադրական պրակտիկան անց է կացվում Վանաձոր քաղաքի առաջատար հանրակրթական դպրոցներում՝ 6-12-րդ դասարաններում, որտեղ պրակտիկանտները կարող են իրականացնել պրակտիկայի

ծրագրով նախատեսված բոլոր աշխատանքները, ծանոթանալ հմուտ մանկավարժների փորձին:

4. ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

«Պատմություն» մասնագիտությունից մանկավարժական արտադրական պրակտիկան առկա ուսուցման համակարգի ուսանողներն անցկացնում են 7-րդ և 8-րդ կիսամյակում՝ 4 շաբաթ, 120 ժամ տևողությամբ, որից ուսանողը վաստակում է 6 կրեդիտ: Հեռակա ուսուցման համակարգի ուսանողները պրակտիկան անցկացնում են ուսումնառության 8-րդ և 9-րդ կիսամյակում՝ նույնպես 4 շաբաթ, 120 ժամ աշխատածավալով: Պրակտիկայի ընթացքում ուսանողներն ազատվում են դասերից: Պրակտիկանտին աջակցում են առարկայի մեթոդիստը, մանկավարժը, հոգեբանը, դպրոցի տնօրենը, փոխտնօրենը, առարկայի ուսուցիչը, դասարանի դասղեկը:

Պրակտիկայի առաջին շաբաթը կատարում է կողմնորոշիչ և փորձնական գործառույթներ: Նշված հանգամանքը հաշվի առնելով՝ այս փուլում ուսանող-պրակտիկանտին տրվում են դասավանդման գործընթացի հետ կապված սահմանափակ թվով առաջադրանքներ, ավելի մեծ ուշադրություն դարձնելով հետազոտական բնույթի աշխատանքներին: Պրակտիկայի առաջին շաբաթվա ընթացքում պրակտիկանտները ծանոթանում են դպրոցի կոլեկտիվին, ուսումնադաստիարակչական պլաններին, դասարանների աշակերտական կազմին, առարկայի թեմատիկ պլաններին, դասղեկի աշխատանքային պլաններին, կազմում են անհատական աշխատանքային պլանը, որը ներկայացնում են օրագրի «Անհատական պլան» էջում, դասեր են լսում առարկայի ուսուցչի մոտ և քննարկում դրանք: Հետագա 3 շաբաթների ընթացքում դասեր են պարապում և իրականացնում պրակտիկայի ծրագով պահանջվող բոլոր աշխատանքները:

Պրակտիկան իրականացնում է նախապես ունեցած հմտությունների և կարողությունների ամրապնդման գործառույթ, խորացնում և ընդարձակում է ապագա շրջանավարտի մասնագիտական որակները: Պրակտիկայի ընթացքում ուսանողը ոչ միայն պլանավորում է առանձին միջոցառումներ, այլև՝ ուսուցման գործընթացի ամբողջական փուլեր:

Ուսանողները դպրոց ներկայանում են ուսումնական պլանով նախատեսված օրը՝ ԲՈՒՀ-ում անցկացված խորհրդակցությունից հետո: Նրանց հետ դպրոց են այցելում մասնագիտության գծով մեթոդիստը, մանկավարժը, հոգեբանը:

Նախապատրաստվելով պարապմունքներին, ուսանողները մշակում են դասի կոնսպեկտ-պլանները, որոնք հաստատվում են ուսուցչի և մեթոդիստի կողմից: Ցանկալի է, որ առաջին դասերի պլանները մշակեն ամբողջ խմբով: Որոշակի փորձ կուտակելուց հետո, ուսանողները՝ մեթոդիստի հետ համաձայնացնելով, ծավալուն կոնսպեկտից կարող են անցնել դասի հակիրճ պլանի կազմմանը:

5. ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՂԵԿԱՎԱՐԻ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑ ՂԵԿԱՎԱՐԻ) ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

5ա. Առարկայի մեթոդիստի պարտականությունները

Պրակտիկայի նախապատրաստական փուլի աշխատանքներ

1. Ուսումնասիրել արտադրական պրակտիկայի ծրագիրը, նախանշել անելիքները:
2. Պրակտիկան սկսվելուց երկու շաբաթ առաջ ուսումնասիրել պրակտիկայի անցկացման ժամանակահատվածում տվյալ առարկայի ծրագիրը, թեմատիկ պլանները, չափորոշիչը, դասագրքերի դրան համապատասխանող հատվածի բովանդակությունը:
3. Լինել դպրոցում, պատկերացում կազմել տվյալ առարկայից պարապվող ժամաքանակի, դասացուցակի, դասարանների առանձնահատկությունների մասին:
4. Մասնակցել արտադրական պրակտիկայի կոնֆերանսին, ուսանողներին ծանոթացնել պրակտիկայի ծրագրին, պրակտիկանտի պարտականություններին և իրավունքներին, օրագրի վարման կարգին:
5. Լրացնել օրագրի «Պրակտիկայի նպատակը» էջի համապատասխան տողերը, օգնել պրակտիկանտին ներկայացնել պրակտիկայի անհատական պլանը օրագրի «Անհատական պլան» բաժնում:

Պրակտիկայի սկզբնական փուլում դպրոցում իրականացվող աշխատանքներ

1. Պրակտիկայի առաջին օրն ուսանողների հետ միասին այցելել դպրոց և նրանց ներկայացնել դպրոցի տնօրենությանը, համապատասխան մասնագետներին:
2. Ծանոթացնել առարկայի ուսուցչին պրակտիկայի ծրագրի, պրակտիկանտների հետ:
3. Մասնակցել ըստ դասարանների ուսանողների բաշխմանը՝ հաշվի առնելով, որ յուրաքանչյուր ուսանող պետք է պարապի ամենաքիչը 6 դաս՝ մեկ դասարանում կամ մի քանի դասարանում, որը պրակտիկայի ծրագրի կատարման պահանջ է:
4. Մասնակցել նաև ըստ դասղեկների ուսանողների բաշխմանը, հետևելով, որ մեկ դասարանում պրակտիկանտների թիվը չգերազանցի 3-4ը:
5. Կազմել աշխատանքային գրաֆիկ, պրակտիկայի ընթացքում կատարելիք աշխատանքների վերաբերյալ օրացուցային պլան և ներկայացնել այն ամբիոն, պրակտիկայի բաժին:

Պրակտիկայի ընթացքում կատարվող աշխատանքներ.

Նախապես կազմած օրացուցային պլանի համաձայն իրականացնել հետևյալ աշխատանքները.

1. Ուսանող-պրակտիկանտներին նախապատրաստել դասերին՝ ըստ հավելվածում ներկայացված ալգորիթմի, նրանց հետ միասին կազմել դասի պլանը[1] և այն հաստատել պարապմունքից 1-2 օր առաջ:
2. Դասալսումներ իրականացնել, անպայմանորեն քննարկել դրանք, կազմել քննարկման արձանագրություն* և ներկայացնել ամբիոն:
3. Հետևել պրակտիկանտի կողմից պրակտիկայի օրագրի ժամանակին և մեթոդապես ճիշտ վարմանը և պատասխանատվություն կրել դրա համար:
4. Առարկայի ուսուցչի հետ միասին ղեկավարել արտադասարանական առարկայական միջոցառումների կազմակերպման աշխատանքները:
5. Հետևել պրակտիկանտների հաճախմանը, բացակայության դեպքում տվյալները ներկայացնել դեկանատ, պրակտիկայի բաժին:

[1] Տես՝ ծրագրի 9-րդ կետում ներկայացված հավելված 1-ը:

Պրակտիկայի ամփոփման աշխատանքներ

1. Պրակտիկայի ավարտին օրագրում բնութագրել պրակտիկանտի կատարած աշխատանքը, գնահատել նրան[2]:
2. Պրակտիկայի բաժին ներկայացնել իրեն կցված բոլոր ուսանողների պրակտիկայի ծրագրով պահանջվող փաստաթղթերը պատշաճ վիճակով:
3. Մասնակցել պրակտիկայի պաշտպանությանը, պրակտիկանտի վերջնական գնահատականի ձևավորմանը:

5բ. ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՉԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պրակտիկայի սկզբնական փուլում իրականացվող աշխատանքներ

1. Ծանոթանալ պրակտիկայի ծրագրի և իր պարտականությունների հետ:
2. Ընդունել պրակտիկանտներին, առարկայի մեթոդիստի հետ միասին իրականցնել ըստ դասարանների ուսանողների բաշխումը՝ հաշվի առնելով, որ յուրաքանչյուր ուսանող պետք է պարապի առնվազն 6 դաս՝ մեկ դասարանում կամ մի քանի դասարանում, որը պրակտիկայի ծրագրի կատարման պահանջ է:
3. Ծանոթացնել պրակտիկանտներին իրենց հատկացված դասարանների աշակերտական կոլեկտիվին, աշակերտների առանձնահատկություններին:
4. Պրակտիկանտներին տրամադրել առարկայի ծրագիրը, չափորոշիչները, դասագրքերը, թեմատիկ, աշխատանքային պլանները:
5. Օգնել պրակտիկանտին ներկայացնելու պրակտիկայի անհատական պլանը օրագրի «Անհատական պլան» բաժնում:
6. Կազմել պրակտիկայի ընթացքում կատարելիք աշխատանքների գրաֆիկ, օրացուցային պլան, քննարկել դրանք առարկայի մեթոդիստի հետ:
7. Պրակտիկայի սկզբնական փուլում պարապել դասեր, դրանք քննարկել, վերլուծել ուսանողների մասնակցությամբ:

Պրակտիկայի ընթացքում կատարվող աշխատանքներ

[2] Գնահատման համակարգը ներկայացված է ծրագրի 8-րդ կետում:

Նախապես կազմած օրացուցային պլանի համաձայն իրականացնել հետևյալ աշխատանքները.

1. Ուսանող-պրակտիկանտներին նախապատրաստել դասերին՝ ըստ հավելվածում ներկայացված ալգորիթմի, նրանց հետ միասին կազմել դասի պլանը և այն հաստատել պարապմունքից 1-2 օր առաջ:
2. Պրակտիկանտներին տրամադրել դասին անհրաժեշտ միջոցներ, լրացուցիչ նյութեր:
3. Դասալսումներ իրականացնել պրակտիկանտների մոտ, անպայմանորեն քննարկել դրանք:
4. Ուղղորդել պրակտիկանտներին անհատական աշխատանքներ կազմակերպելու տվյալ առարկայից հետ մնացող կամ առարկայով հետաքրքրված աշակերտների հետ:
5. Պրակտիկանտներին մասնակից դարձնել արտադասարանական առարկայական միջոցառումների կազմակերպման աշխատանքներին:
6. Հետևել պրակտիկանտների պարտականությունների կատարմանը, տվյալներ տրամադրել առարկայի մեթոդիստին:

Պրակտիկայի ամփոփման աշխատանքներ

1. Պրակտիկայի ավարտին օրագրում բնութագրել պրակտիկանտի կատարած աշխատանքը, գնահատել նրան:
2. Մասնակցել պրակտիկայի պաշտպանությանը, պրակտիկանտի վերջնական գնահատականի ձևավորմանը:

5գ. Դպրոցի տնօրենի և ուսմասվարի պարտականությունները

1. Պրակտիկանտներին ծանոթացնում են դպրոցին, ուսուցչական կոլեկտիվին, դպրոցական փաստաթղթերին՝ կրթադաստիարակչական աշխատանքների պլանին, դասամատյաններին և այլն:
2. Իրականացնում են պրակտիկանտների բաշխումն ըստ դասարանների, ապահովում են պրակտիկանտներին անհրաժեշտ աշխատանքային պայմաններ:
3. Կատարում են դասալսումներ:
4. Վերահսկում են պրակտիկանտների հաճախումները:

6. ՊՐԱԿՏԻԿԱՆՏԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՓՈՒԼՈՒՄ

1. Մասնակցել արտադրական պրակտիկայի կոնֆերանսին, ծանոթանալ պրակտիկայի ծրագրին, իր պարտականություններին և իրավունքներին, օրագրի վարման կարգին:
2. Մեթոդիստի հետ միասին լրացնել օրագրի «Պրակտիկայի նպատակը» էջի համապատասխան տողերը, պատրաստել պրակտիկայի անհատական պլանը

ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

1. Հանդիպել դպրոցի ղեկավարության, ուսուցիչների և դասղեկների հետ,
2. Զրուցել պատմության ուսուցիչների հետ, քննարկել դասերի և արտադասարանական աշխատանքների օրացուցային պլանները,
3. Հաճախել պատմության դասերին՝ դասավանդող ուսուցչի աշխատանքի մեթոդներին ծանոթանալու նպատակով, կատարել պատմության դասի վերլուծություն, պարզել սովորողների պատրաստվածության աստիճանը:
4. Աշխատանքներ կատարել պատմության կաբինետում, ծանոթանալ դիտազննական պարագաներին, կաբինետի կահավորանքին,
5. Ծանոթանալ իրենց կցված դասարանների աշակերտների հետ, մասնակցել արտադասարանային միջոցառումներին:
6. Ծանոթանալ դպրոցի փաստաթղթերին (կանոնադրությանը, կրթական ծրագրերին, դասղեկի աշխատանքային պլանին, դասամատյանին, աշակերտների անձնական գործերին),
7. Իրենց ամրացված դասարաններում պլանավորել և անցկացնել դասեր, կատարել դրանց վերլուծություններ,
8. Անհատական աշխատանքներ կատարել աշակերտների հետ,
9. Օգնել դասղեկին կազմակերպել և անցկացնել արտադասարանային միջոցառումներ,
10. Կատարել հոգեբանա-մանկավարժական դիտումներ,

11. Մասնակցել արտադրական խորհրդակցությանը, կատարել պրակտիկայի արդյունքների նախնական ամփոփում:

ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՎԱՐՏԻՑ ՀԵՏՈ

1. Լրացնել պրակտիկայի օրագիրը, կազմում աշակերտների և դասարանային խմբի հոգեբանա-մանկավարժական բնութագիրը
2. Պրակտիկայի բաժին ներկայացնել պրակտիկայի փաստաթղթերը
3. Մասնակցել պրակտիկայի պաշտպանությանը, ներկայացնել պրակտիկայի ընթացքը

7. ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՀԱՇՎԵՏՈՒ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Պրակտիկայի ավարտից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պրակտիկանտն առարկայի մեթոդիստին ներկայացնում է.

1. Օրագիրը:
2. Պրակտիկայի ընթացքում կազմած անհատական պլանը:
3. Դասերի և արտադասարանային միջոցառումների կոնսպեկտները:
4. Իր մասնագիտական առարկայի մեկ դասի վերլուծությունը:
5. Արտադասարանական մեկ միջոցառման վերլուծությունը:
6. Հաշվետվություն մանկավարժական պրակտիկայի մասին:
7. Մեկ աշակերտի հոգեբանական-մանկավարժական բնութագիրը:
8. Դասարանի հոգեբանական-մանկավարժական բնութագիրը:

8. Պրակտիկայի գնահատումը

Ուսանողի մանկավարժական պրակտիկան գնահատվում է 100 միավորանոց սանդղակով հետևյալ կերպ.

Գնահատման բաղադրիչները	Հատկացվող միավորը	Գնահատում	
1. Հաճախում	0 - 10		
2. Առարկայի իմացություն	0 - 20		

3. Վարած դասերի վերլուծություն • Կիրառված մեթոդների արդյունավետություն • Նորագույն տեխնոլգիաների կիրառում ` a. համակարգչային տեխնոլոգիայի կիրառում b. այլ տեխնոլոգիաների կիրառում • դասաժամանակի ճիշտ օգտագործում • գնահատում	0 - 7 0-3 0-1 0-3 0-6		
4. Մանկավարժական աշխատանք • արտադասարանային աշխատանքի կազմակերպման կարողություն • դասղեկի ժամի անցկացում, աշխատանք աշակերտական խորհրդի հետ • մանկավարժական հաղորդակցման մշակույթ	0 - 5 0 - 5 0 - 5		
5. Հոգեբանախորհրդատվական աշխատանք • աշակերտի կամ դասարանի կոլեկտիվի հոգեբանական բնութագրի կազմում • դասի հոգեբանամանկավարժական վերլուծության անցկացում • արտադասարանային միջոցառման հոգեբանական հիմնավորում	0 - 5 0 - 5 0 - 5		
Պրակտիկայի պաշտպանություն	0 - 20		
Ընդհանուր միավորը	100		

Արտադրական պրակտիկայի հաճախումներին հատկացվող միավորները՝ ըստ ուսանողի մասնակցության աստիճանի.

Մասնակցության աստիճանը %	**Հատկացվող միավորը**
96-100	10
91-95	8
86-90	6
81-85	4
76-80	2
0-75	0

9. ԴԱՍԻՆ ՊՐԱԿՏԻԿԱՆՏԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵԼԸ (ՀԱՎԵԼՎԱԾ 1)

Դասի ընթացքում կազմակերպվում է սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացը, որի հետևանքով քայլ առ քայլ ձևավորվում է միջնակարգ դպրոցի շրջանավարտը՝ ապագա քաղաքացին: Հերթական դասին նախապատրաստվելը հաճախ սխալմամբ նույնացվում է դասի պլան-կոնսպեկտ կազմելու հետ: Իրականում դասին նախապատրաստվելը բավականին աշխատատար գործընթաց է, իսկ դասի պլանի կազմումն այդ գործընթացի վերջին փուլն է միայն: Անգամ փորձառու ուսուցիչները մեկ դասին նախապատրաստվելու համար մոտ երկու ժամ են ծախսում:

Պրակտիկանտին հերթական դասին նախապատրաստվելուն օգնում են առարկայի ուսուցիչը և մեթոդիստը: Պրակտիկանտը դասին նախապատրաստվում է և կազմած պլան-կոնսպեկտն առարկայի ուսուցչին կամ մեթոդիստին հաստատման է ներկայացնում պարապվելիք դասից 1-2 օր առաջ:

Հերթական դասին նախապատրաստվելիս պրակտիկանտը պետք է իրականացնի հետևյալ հաջորդական աշխատանքները.

- ✓ ճշգրտի տվյալ դասաժամին ուսուցանվող թեմայի տեղը ըստ թեմատիկ պլանի, հստակեցնի նախորդող և հաջորդող թեմաների կապը, որն անհրաժեշտ է ներառարկայական կապերի ստեղծման, դրանով իսկ աշակերտների գիտելիքների համակարգման համար,
- ✓ ուսումնասիրի դասի թեման դասագրքով, լրացուցիչ աղբյուրներով, ապա ծրագրի, չափորոշիչների պահանջներից ելնելով որոշի ինչն է գլխավորը, որքանով է անհրաժեշտ դասագրքի նյութը լրացնել այլ աղբյուրներից: Այս գործողությունների միջոցով ճշգրտվում է դասի բովանդակությունը,
- ✓ այս ամենից հետո սահմանի դասի նպատակներն ու խնդիրները,
- ✓ հաշվի առնելով դասարանի աշակերտական կազմը որոնի դասի նպատակների և խնդիրների իրականացման ուղիներ՝ դասի մեթոդները, միջոցները,
- ✓ մեթոդական ուղեցույցներով ուսումնասիրի տվյալ դասի անցկացման առաջարկվող տարբերակները: Դասագրքի և ծրագրի հիման վրա գրված «Ուսուցչի ձեռնարկներե-ի և այլ մեթոդական մշակումներր մասին կարելի է ասել,

որ դրանք պետք է ուղեցույց ծառայեն, հատկապես սկսնակ ուսուցիչների համար, և ոչ թե ուղղակիորեն օգտագործվեն որպես պատրաստի պլան կոնսպեկտներ,

- ✓ որոշի դասի տիպը,
- ✓ նախապատրաստի անհրաժեշտ զննական պարագաները, սարքավորումները,
- ✓ մտովի պատկերացնի դասի կառուցվածքն, ընթացքը և, իվերջո, կազմի դասի պլանը:

ԴԱՍԻ ՊԼԱՆԸ

Դասի պլանն ուսուցչի անձնական փաստաթուղթն է, ուստի դրա կազմման քարացած ձևերը խրախուսելի չեն. ամեն ոք այն կարող է կազմել յուրովի:

Առարկայի ուսուցչի կամ մեթոդիստի օգնությամբ դասին մանրամասն նախապատրաստվելուց հետո պրակտիկանտն ազատ շարադրմամբ կազմում է դասի պլան-կոնսպեկտը, որում պետք է արտահայտված լինի.

Դասի նպատակը, որը պետք է բխեցնել կրթակարգի միջնակարգ դպրոցի շրջանավարտի նկարագրից:

Դասի խնդիրները, որոնք պետք է բխեն առարկայի ծրագրի, չափորոշիչների պահանջներից:

Դասին կիրառվող մեթոդները, որոնք պետք է հնարավորություն տան իրականացնելու դասի նպատակներն ու խնդիրները:

Դասին օգտագործվող միջոցները, որոնք պետք է ծառայեն դասի նպատակների և խնդիրների իրականացմանը:

Դասի տիպը, որը բխում է պլանավորված այն գործողությունների բազմազանությունից, որոնք պետք է կատարեն ուսուցիչն ու սովորողները որպեսզի ապահովվի առաջադրված նպատակների և խնդիրների իրականացումը: Այդ գործողություններից են.

- ✓ նոր նյութի ուսումնասիրումը, որն իրականացվում է խթանման, իմաստի ընկալման և կշռադատման փուլերով,
- ✓ գիտելիքների կրկնությունը, տարբեր մեթոդներով համակարգումը,
- ✓ սովորողների ձեռք բերած գիտելիքների, կարողությունների գնահատումը և հաշվառումը,

- ✓ սովորողների արժեքային համակարգի ձևավորումը, որը միավորով չի գնահատվում,
- ✓ տնային հանձնարարությունների առաջադրումը,
- ✓ կատարված տնային առաջադրանքների ստուգումը:

Դասի ընթացքը ներկայացնում է դասին պլանավորած գործողությունների հաջորդականությունը մանրամասնորեն. պետք է նկարագրվի դասի բոլոր փուլերում նախատեսված աշխատանքները, աշակերտներին ուղղվելիք հարցերը, տնային հանձնարարության կատարման հրահանգները:

Այնուամենայնիվ, նույնիսկ լավ մտածված և մանրակրկիտ կազմած դասի պլանն ինքստինքյան չի երաշխավորում դասի հաջող ընթացքը: Ուսուցիչը պետք է հնարավորություն ունենա իրականացնելու նախանշված աշխատանքները, իսկ դա կախված է ոչ միայն նրա վարպետության աստիճանից, այլև զանազան արտաքին պայմաններից: Այդ իսկ պատճառով ցանկացած դասին առկա են իմպրովիզացիայի տարրեր, այսինքն, դասը ստեղծագործական գործընթաց է:

10. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԵՐ

(Հավելված 2. «Պրակտիկանտի իրավունքներն ու պարտականություններ բաժնի 7-րդ և 8-րդ կետերի համար»)

<u>ՁԵՎ 1.</u> ԴԱՍԻ ՊԼԱՆ-ԿՈՆՍՊԵԿՏ

Դասարանը_____

Ամսաթիվը « » 20 թ.

Առարկան_____

Դասի վերնագիրը _____

Դասի տիպը_____

Դասի նպատակը_____

Դասի կահավորանքը_____

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ	ՈՒՍՈՒՑՉԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ	ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
Այս սյունակում գրվում է դասի համառոտ պլանը:	Այս սյունակում գրվում է. Նոր ուսումնական նյութի բովանդակությունը, ուսուցչի աշխատանքի մեթոդները, նորի ուսուց-ման միջոցները, հետևություններն ու հանրագումարային ընդ-հանրացումները, ճանա-չողական առա-ջադրանքները, աղբյուրների, դասագրքի տեքստի, նկարների հետ կատարվող աշխատանք-ների ձևերը:	Աշակերտների ենթադրյալ պատասխանները, առաջադրանքների կատարմանն օրինակելի ձևերը, գործունեության ձևերը և ակտիվության միջոցները:

<u>ՁԵՎ 2.</u> ԴԱՍԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՊԼԱՆ

«___»_____, 20 թ.

Դասարան_____

Առարկա_____

Դասի թեման_____

1. **Հիմնական հարցեր**

1._____

2._____

3._____

4._____

5._____

2. **Նպատակը և խնդիրները**

Սովորողը պետք է՝

պատկերացում ունենա _____

_____

_____

_____

_____

իմանա

_____

_____

_____

_____

կարողանա բացահայտել

_____

_____

_____

_____

գիտակցի

_____

_____

_____

_____

գնահատի

_____

_ _____

_____

_____

3. Հիմնական հասկացություններ և առանցքային պարագաներ _____

_____

_____

_____

4. Ուսումնադիտողական պարագաներ _____

_____

_____

5.Ներառարկայական և միջառարկայական կապեր _____

_____

_____

_____

6.Դասատիպեր

_____

_____

_____

7.Ուսուցման մեթոդներ, հնարներ _____

_____

_____

8.Դասի ընթացքը _____

Տնային առաջադրանքներ_____

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՍԽԵՄԱ

Դասից հետո անհրաժեշտ է իրականացնել վերլուծություն հետևյալ բաղադրամասերով.

1. Դասի թեման, նրա տեղը պատմության բաժնի և ամբողջ դասընթացի մեջ,
2. Դասի նպատակը, նրա կրթական-դաստիարակչական և զարգացնող խնդիրները,
3. Դասի տիպը, նրա հիմնական փուլերը, ժամանակի նպատակային օգտագործումը,
4. Աշակերտների գիտելիքների և հմտությունների ստուգման բովանդակությունն ու մեթոդիկան: Ստուգման ձևերն ու տեսակները. Անհատական, փրոնտալ, խմբային, գործնական և ինքնուրույն աշխատանքներ, տարբերակված առաջադրանքներ,
5. Նոր նյութին անցնելը: Նրա կապը անցած թեմաների հետ, նյութի ուսումնասիրության հետագա հեռանկարները, աշակերտների ներգրավումը ճանաչողական գործընթացի մեջ, առաջադրանքների կատարումը, հարցերին պատասխանելը,
6. Նոր նյութի ուսումնասիրության բովանդակությունն ու մեթոդիկան: Ուսուցչի կողմից նոր թեմայի շարադրման հնարները, դրանց համապատասխանությունը աշակերտների տարքային առանձնահատկություններին: Շարադրանքի պատկերավորությունը, հստակությունը, կոնկրետությունը, զգացմունքայնությունը, տրամաբանական հաջորդականությունը և այլն: Ուսուցման միջոցների՝ քարտեզների, նկարների, ապլիկացիաների առկայությունը:
7. Ամրապնդման համար առանձնացվող նյութի ընտրությունը, բովանդակությունը, մատուցման մեթոդիկան: Ինքնուրույն աշխատանքի համար տարբերակված առաջադրանքների մշակումը:
8. Տնային առաջադրանքի կազմակերպման բովանդակությունն ու մեթոդիկան, ծավալը, տեսակը, կատարման հրահանգները և այլն: